ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3169-Ա « 08 » օգոստոսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի Հ.4670-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հեղինե Կիվիրյանի 30.07.2025թ. հ.Դ-82638-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2024թ. նոյեմբերի 29-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.4670-Ա որոշման հավելվածի 11-րդ կետը:

3.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված
Երևանի քաղաքապետի
08.08.2025թ.
հ. 3169-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Գևորգ Գրիգորյան	Գ. Բաշինջաղյան փողոց, հ.179/2 և հ.179/3	շինություն	Գևորգ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, Գ. Բաշինջաղյան փողոցի հ.179/2 և հ.179/3 հասցեներում գտնվող շինություններին /վկ. հ.10072025-01-0015 և հ.10072025-01-0062/ ըստ միավորման հատակագծի տրամադրել հասցե՝ Գ. Բաշինջաղյան փողոց, հ.179/2	01013FHYCT2E	
2	Մարիաննա Գրիգորյան	Կոմիտասի պողոտա, հ.36 շենք, հ.58 և 59	տարածք	Անշարժ գույքի նվիրատվության 22.07.2025թ. հ.5398 պայմանագրով, Մարիաննա Գրիգորյանին նվիրած Կոմիտասի պողոտայի հ.36 շենքի հ.58 և 59 հասցեում գտնվող տարածքին տրամադրել հասցե՝ Կոմիտասի պողոտա, հ.36 շենք, շինություն հ.62/1	01033ASLLLNM	
3	Հեղինե Կիվիրյան /լիազորված անձ/ Վերգինե Մատենցյան, Սամվել և Անուշավան Խաչատրյաններ /սեփականատեր/	Թումանյան փողոց, հ.5 շենք, հ.11	բնակարան	Վերգինե Մատենցյանին, Սամվել և Անուշավան Խաչատրյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Թումանյան փողոցի հ.5 շենքի հ.11 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.31012019-01-0203, ընդհ. բաժն. 2.3քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 55.9քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Թումանյան փողոց, հ.5 շենք, բն.11/1	01063VHZNF72	
4	Տիգրան Ավագյան	Մ. Սարյան փողոց, հ.20/1 շենք, հ.23	բնակարան	Տիգրան Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող, Մ. Սարյան փողոցի հ.20/1 շենքի հ.23 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.04072025-01-0188, ընդհ. բաժն. 2.30քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 38.18քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Մ. Սարյան փողոց, հ.20/1 շենք, բն.23/1	01063QRFYABG	

5	Վիգեն Գալստյան /լիազորված անձ/ Համլետ Սիմոնյան	Ա. Արմենակյան /Ամառանոցային/ փողոց, հ.219 և Ա. Արմենակյան փողոց, հ.106	բնակելի տուն և հողամաս	Համլետ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող, Ա. Արմենակյան /Ամառանոցային/ փողոցի հ.219 և Ա. Արմենակյան փողոցի հ.106 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.30012023-01-0273 և վկ. հ.27012023-01-0242/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ա. Արմենակյան փողոց, հ.106	01093AVRMGEL	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246